ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
~~ՆԱԽԱԳԻԾ~~

Պ-1370-17.06.2026-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 05-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) ~~218-րդ հոդվածի՝~~
~~1-ին մասում «մեկից երեք» բառերը փոխարինել «երկուսից հինգ» բառերով,~~
~~2-րդ մասում «երեքից յոթ» բառերը փոխարինել «չորսից ութ» բառերով։~~

~~**Հոդված 2.** Օրենսգրքի 219-րդ հոդվածի՝~~
~~1-ին մասում «երեքից վեց» բառերը փոխարինել «չորսից ութ» բառերով,~~
~~2-րդ մասում «չորսից ութ» բառերը փոխարինել «հինգից տաս» բառերով։~~

~~**Հոդված 3.** Օրենսգրքի 220-րդ հոդվածի՝~~
~~1-ին մասում «տասնապատիկից երեսնապատիկ» բառերը փոխարինել «քսանապատիկից հիսնապատիկի» բառերով, «մեկից երեք» բառերը փոխարինել «երկուսից հինգ» բառերով,~~
~~2-րդ մասում «երկուսից հինգ» բառերը փոխարինել «երեքից վեց» բառերով։~~

~~**Հոդված 4.** Օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասում «երեքից վեց» բառերը փոխարինել «չորսից ութ» բառերով։~~

~~**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։~~

57-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը սույն օրենսգրքի Հատուկ մասով կարող է նախատեսվել որպես պարտադիր լրացուցիչ պատիժ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասը «հնարավոր չի համարում անձի կողմից հետագա ժամանակահատվածում որոշակի պաշտոններ զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը,» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքի, երբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված է որպես պարտադիր լրացուցիչ պատիժ» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 218-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 219-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 220-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ զրկելով հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:»

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: